ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք սիրում ենք բարդել մեր մեղավորությունն ուրիշների վրա: Գայթակղվելիս մենք պատրաստակամորեն մեղադրում ենք Աստծուն մեր պայքարների համար: Սուրբ գիրքն ասում է, որ գայթակղության ճնշումը գալիս է մեր իսկ սրտերից: Աստված չի գայթակղեցնում մեզ. Նա օգնում է մեզ ազատվել գայթակղությունից: Շնորհիվ այն աշխատանքի, որը Քրիստոսը կատարել է մեր փոխարեն, մենք կարող ենք դիմակայել գայթակղության գրոհներին:

Օրինակ.

Ինչպե՞ս են որսում առնետներին: Միջոցներից մեկն առնետների թույն օգտագործելն է, որը կա, օրինակ, «**դի-Քոն**» կոչվող թունավոր կերի մեջ: «Դի-Քոն»-ը գրեթե 99%-ով բաղկացած է կերից, և 1%-ով՝ «**բրոդիֆակում**» կոչվող թույնից: Այս թույնն այնքան արագ է ջրիկացնում առնետների արյունը, որ նրանց մոտ արյունազեղումներ են սկսվում: Իհարկե, դուք չեք կարող առնետներ բռնել, եթե բրոդիֆակումով լցված մի գեղեցիկ բաժակ դնեք հատակին: Այն չի հրապուրի նրանց: Ահա թե ինչու մահացու թույնն այնպես է քողարկվում, որ հրապուրիչ դառնա առնետների համար. այն քողարկվում է սնունդով: Հետևելով իրենց քաղցին՝ առնետներն ուտում են այն, ինչը սկսում է դանդաղորեն կործանել նրանց:

"Աշակերտություն" անվամբ ամսագրի ընթերցողների շրջանում կատարած վերջին ուսումնասիրության ժամանակ, դասակարգել են ամենամեծ հոգևոր մարտահրավերների տարբեր ոլորտներ:

1.Մատերիալիզմ / Materialism
2.Հպարտություն / Pride
3.Եսակենտրոնություն / Self-centeredness.
4.Ծուլություն / Laziness
5. Զայրույթ/ Դառնություն / Anger/Bitterness.
6. Սեռական կիրք / Sexual lust.
7.Նախանձ / Envy
8.Շատակերություն / Gluttony
9.Խաբեբայություն / Lying

Ուսումնասիրությանը մասնակցողները նկատել էին, որ այս փորձությունները ավելի շատ գալիս են այն ժամանակ, երբ նրանք չեն ցանկանում Աստծո հետ ժամանակ անցկացնել (81%) և այն ժամանակ, երբ նրանք ֆիզիկապես հոգնած վիճակում են (57%):

Աղոթքի միջոցով փորձությանը դիմակայում են (84%), կոմպրոմիսային իրավիճակներից խուսափում են(76%), Աստվածաշնչի ուսումնասիրություն (66%) և որևէ մեկի հանդեպ պատասխանատու լինելը (52%).

ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅԱՆ ՃՆՇՈՒՄԸ

Բանալի խոսք.

Մատ. 4:1-11

Այն ժամանակ Յիսուսը Հոգիից անապատը տարուեցաւ, որ փորձուի
սատանայից։ 2 Եւ քառասուն օր և քառասուն գիշեր ծոմ պահելուց յետոյ սովեց։

3 Եւ փորձիչը նորա մօտ գալով ասեց. Եթէ Աստուծոյ որդի ես, ասիր որ այս քարերը հաց
լինեն։ 4 Նա էլ պատասխան տուաւ և ասեց. Գրուած է՝ Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն
խօսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանից։

5 Այն ժամանակ սատանան նորան առաւ տարաւ սուրբ քաղաքը, և կանգնեցրեց նորան տաճարի
աշտարակի վերայ, 6 Եւ ասեց նորան. Եթէ Աստուծոյ որդի ես, քեզ վայր գցիր. որովհետև գրուած
է թէ՝ Իր հրեշտակներին կհրամայէ քեզ համար, և ձեռների վերայ կբարձրացնեն քեզ, որ քո ոտքը
քարի չդիպցնես երբէք։ 7 Յիսուսը նորան ասեց. Դարձեալ գրուած է թէ՝ Մի փորձիր Տիրոջը՝ քո
Աստուծուն։

8 Դարձեալ առաւ տարաւ նորան սատանան մի շատ բարձր սար՝ և ցուցց տուաւ նորան
աշխարհքի բոլոր թագաւորութիւնները և նորանց փառքը, 9 Եւ ասեց նորան. Սորանց ամենը քեզ
կտամ, եթէ ընկած երկրպագես ինձ։ 10 Այն ժամանակ ասեց նորան Յիսուսը. Դէն գնա,
սատանայ. որովհետև գրուած է թէ՝ Տիրոջը՝ քո Աստուծուն երկրպագիր և միայն նորան
պաշտիր։ 11 Այն ժամանակ սատանան թողեց նորան, և ահա հրեշտակներ մօտ եկան և
ծառայում էին նորան։

Description: “The essence of temptation is the invitation to live independently of God.” - Neil T. Anderson

1. ԱՍՏՎԱԾ ՉԻ ԳԱՅԹԱԿՂԵՑՆՈՒՄ, ԲԱՅՑ ՆԱ ՍՏՈՒԳՈՒՄ Է (ՄԱՏԹԵՈՍ 4:1)

Այն ժամանակ Յիսուսը Հոգիից անապատը տարուեցաւ, որ փորձուի սատանայից։

- Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը Հոգուց անապատ տարվեց, որ սատանան գայթակղեցներ Նրան: Մենք գիտենք Հակոբոսի գրքի մեր խմբակային ուսուցումից, որ Աստված ոչ ոքի չի գայթակղեցնում (Հակոբոս 1:13): Ուրեմն, ինչո՞ւ Սուրբ Հոգին առաջնորդեց Հիսուսին անապատ՝ հատկապես գայթակղությանը հանդիպելու նպատակով: Մտածեք այս գաղափարների մասին.

- Հիշեք՝ Հակոբոսը գրում է, որ «***մեր հավատքի փորձառությունը (կամ՝ ստուգումը) համբերություն է գործում***» (Հակոբոս 1:2): Համբերությամբ հարատևելը պարզապես ցանկալի հատկանիշ չէ հասուն քրիստոնյայի համար. այն

անհրաժեշտություն է: Հակոբոսը շարունակում է՝ ասելով, որ «Համբերությունը պետք է կատարի իր աշխատանքը Քրիստոսի հետևորդի կյանքում, որպեսզի նա հասուն և կատարյալ լինի, և ոչ մի բանի պակասություն չունենա»: Այնպես որ, Աստված անելու է այն, ինչ պահանջվում է՝ այս առաքինությունը մեզանում ձևավորելու համար:

- Ամեն ուսուցիչ մեր կյանքում ստուգարքներ է տվել է մեզ, այնպես չէ՞: Հիմնականում մենք ունեցել ենք երկու տեսակի ուսուցիչներ՝ այնպիսիք, որոնք ստուգում էին մեզ, որպեսզի **ամրացնեին մեր գիտելիքները**, և այնպիսիք, ովքեր ստուգում էին մեզ՝ փորձելով **բռնել մեզ սխալի մեջ** (այն դեպքում, եթե մենք չէինք յուրացրել ուսումնական նյութը): Մտածեք այն մասին, թե ինչպե՞ս եք դուք ընկալում Աստծուն: Ինչպիսի՞ ուսուցիչ է Նա:

Գաղափարներ, որոնք կարող եք կիրառել. Ներկայումս ո՞ր ոլորտում եք դուք գայթակղվում: Ի՞նչն է ավելի լավ՝ խնդրել Աստծուն, որ հեռացնի՞ այդ գայթակղությունը, թե՞ խնդրել, որ Նա օգնի ձեզ անցնել ձեր փորձությունը (կամ ստուգումը): Աստված մշտապես օգնում է ազատվել ամեն գայթակղությունից (կարդացեք Ա Կորնթացիների 10:13):

> *1 Կոր. 10:13 - 13 Ձեզ ուրիշ փորձութիւն չէ պատահել բացի մարդկային փորձութիւնից. բայց Աստուած հաւատարիմ է, որ չի թողել ձեզ ձեր կարողութիւնիցը վեր փորձուելու, այլ փորձութեան հետ ելքն էլ կպատրաստէ, որ կարողանաք* ***համբերել****:*

2. ԳԼԽԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՍՏԾՈ ԽՈՍՔՆ Է (ՄԱՏԹԵՈՍ 4:4, 7, 10)

4 Նա էլ պատասխան տուաւ և ասեց. Գրուած է՝ Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խօսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանիցը:

7 Յիսուսը նորան ասեց. Դարձեալ գրուած է թէ՝ Մի փորձիր Տիրոջը՝ քո Աստուծուն:

10 Այն ժամանակ ասեց նորան Յիսուսը. Դէն գնա, սատանայ. որովհետև գրուած թէ՝ Տիրոջը՝ քո Աստուծուն երկրպագիր և միայն նորան պաշտիր:

- Այն երեք գայթակղությունները, որոնց մասին գրում է Մատթեոսը, ներկայացնում են լայն ոլորտներ, որոնց կարելի է վերագրել մեր ներկայիս գայթակղությունները:
    - **Առաջինը վերաբերվում էր նյութական կարիքներին:** Հիսուսը քաղցած էր, և սատանան գայթակղեցնում էր Նրան քարերը հաց դարձնելու մտքով:
    - **Երկրորդը դժվարությունները շրջանցելու գայթակղությունն էր:** Հիսուսը գիտեր, թե ի՛նչ պետք է աներ՝ Հոր ծրագիրն իրագործելու համար: Նա պետք է Երուսաղեմ գնար, չարչարվեր և սպանվեր (կարդացեք Մատթեոս 16:21): Սատանան գայղթակղեցնում էր Հիսուսին շրջանցել այդ ամենը Աստծո զորության աներևակայելի ցուցադրման միջոցով, ինչը, անկասկած, կհամոզեր մարդկանց, որ Նա Աստծո Որդին է:

- **Վերջապես, սատանան գայթակղեցրեց Հիսուսին՝ իշխանություն առաջարկելով.** «Ես կտամ Քեզ աշխարհի բոլոր թագավորությունները, եթե երկրպագես ինձ»:

- Հիսուսը պատասխանեց սատանայի երեք գայթակղություններին էլ Աստծո խոսքով: Ուշադրություն դարձրեք, որ Նա չասաց. «Մի րոպե սպասիր, սատանա՛, մինչև գտնեմ այս խոսքը»:
- Աստծո խոսքը ծածկված էր Նրա սրտում, որ Նա չմեղանչեր Աստծո դեմ (Սաղմոս 119:11): Որպես Քրիստոսի հետևորդներ՝ մենք պետք է շփվենք Աստծո խոսքի հետ ամեն օր, ոչ թե հանենք Աստվածաշունչը դարակից «արտակարգ իրավիճակների» դեպքում:
- Նկարագրելով Աստծո սպառազինությունը Եփեսոսի եկեղեցուն՝ Պողոս առաքյալն անվանեց Աստծո խոսքը «Հոգու սուրը» (Եփեսացիների 6:17): Այն հավատացյալի ամբողջ սպառազինության միակ հարձակողական զենքն է: Դուք պետք է իմանաք, թե ո՛րն է Աստծո ամբողջական սպառազինության առաջնային նպատակը: Եփեսացիների 6:11-ում գրված է, որ այն «**սատանայի հնարքներին հակառակ կանգնելու**» համար է:

3. ԵՐԲ ՄԵՆՔ ՀԱԿԱՌԱԿՎՈՒՄ ԵՆՔ, ՍԱՏԱՆԱՆ ՓԱԽՉՈՒՄ Է, ԵՎ ՀՈԳԻՆ ԶՈՐԱՑՆՈՒՄ Է ՄԵԶ (ՄԱՏԹԵՈՍ 4:11)

11 *Այն ժամանակ սատանան թողեց նորան, և ահա հրեշտակներ մօտ եկան և ծառայում էին նորան:*

- Խոսք 11-ում գրված է, որ սատանան թողեց Հիսուսին, և հրեշտակները եկան ու ծառայեցին Նրան: Համեմատելով այս պատմությունը զուգահեռ հատվածի հետ Ղուկասի Ավետարանում (Ղուկաս 4:13)՝ դուք կտեսնեք հետևյալ արտահայտությունը. «Եվ սատանան հեռացավ Նրանից մինչև մի **<u>նպաստավոր ժամանակ</u>**»: Մենք գիտենք, որ սատանան երկար ժամանակով հանգիստ չի թողնի մեզ:
- Բայց Աստվածաշունչը խոստանում է, որ երբ մենք «հակառակվենք սատանային, նա կփախչի» մեզանից (Հակոբոս 4:7): Ուշադրություն դարձրեք «փախչել» բառի վրա: Փախուստի պատճառը՝ ավելի գերազանց ուժի հանդիպելն է:
  - *7Հնազանդուեցէ՛ք ուրեմն Աստծուն և դիմադրեցէ՛ք Սատանային, ու նա կը փախչի ձեզանից:*
- Աստված խոստանում է, որ Նրա Հոգին կօգնի մեզ մեր տկարություններին (Հռոմեացիների 8:26): Հիսուսի համար այս խոստումն իրականացավ Աստծո հրեշտակների հայտնված ներկայության տեսքով: Եվ մենք ունենք նույն խոստումն Աստծուց:
  - *26Նոյնպէս և Հոգին օգնութեան է հասնում մեր տկարութիւններին. որովհետև մենք աղօթում ենք և չգիտենք, թէ ինչպէս արժան է աղօթել. բայց Հոգին ինքը բարեխօս է լինում մեզ անմռունչ հառաչանքով:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Եկեք անդրադառնանք գործնականին: **Ինչպե՞ս հակառակվել գայթակղությանը:**

> Մենք արդեն հիշատակեցինք ամենակարևորը՝ Աստծո Խոսքը ճանաչելը և այն ձեր սրտում պահելը: Եվ եթե դուք չեք հաճախում տնային խմբակ, որն օգնում է մշտապես ուսումնասիրել և կիրառել Աստծո Խոսքը, դուք պետք է սկսեք անել դա:
>
> Գայթակղությանը հակառակվելու երկրորդ միջոցը դրա գործելակերպը հասկանալն է: **Մենք գայթակղվում ենք, երբ ցանկությունը և հնարավորությունը համընկնում են**:

Մտածեք ամեն մի դեպքի մասին, երբ դուք տեղի եք տվել գայթակղությանը: Դա մշտապես տեղի է ունենում ցանկության և հնարավորության «հատման կետին»:

1. Այնպես որ, երբ դուք մեղք գործելու ցանկություն եք զգում, խնդրեք Աստծուն հեռացնել դրա հնարավորությունը:
2. Երբ դուք մեղք գործելու հնարավորություն ունեք, խնդրեք Աստծուն վերցնել ձեզանից մեղանչելու ցանկությունը:

Իսկ Ի՞նչպես

3. Հիշեք՝ Աստված մշտապես գայթակղությունից հեռանալու հնարավորություն կտա:
   - Միգուցե դա նշանակում է՝ դնել համակարգիչն այնպիսի տեղում, որ բոլորը սենյակում կարողանան տեսնել այն:
   - Կամ՝ ունենալ այնպիսի ընկեր, ով զանգահարում է ձեզ ամեն երեկո գործուղման ընթացքում՝ երբ դուք տանը չեք:
   - Կամ՝ փոխել աշխատանքից տուն գնալու ճանապարհը: Բայց հնարավոր է, որ դուք չկարողանաք խուսափել մեղանչելու հնարավորություններից: Այդ դեպքում, խնդրեք Աստծուն հեռացնել մեղք գործելու ցանկությունը: Խնդրեք Նրան այնպիսի ցանկություն առաջացնել ձեզանում Աստծո իրողությունների հանդեպ, որ այս աշխարհի իրողությունները խամրեն դրա համեմատ:

Մարտին Լյութերն ասաց. «Ես չեմ կարող արգելել թռչուններին թռչել իմ գլխավերևով, բայց ես կարող եմ արգելել նրանց բույն դնել մազերիս մեջ»: Արդյո՞ք դուք թույլ եք տվել որևէ գայթակղության բույն դնել ձեր մտքում: Այդ դեպքում, սկսեք աշխատել այս շաբաթ՝ այդ բները քանդելու համար: